և մոնղոլներից պարտություն կրած Ջալալ ադ-Դինը վտանգավոր հակառակորդ չէ իրենց համար[28]։

Որ Իվանեի գործողությունները պատահական չեն դիտվել և դատապարտվել են ժամանակակիցների ու Ռուսուդան թագուհու կողմից, պարզորոշ երևում է Վրաց ժամանակագրի այն վկայություններից, որոնք վերաբերում են Ջալալ ադ-Դինի դեմ տրված երկրորդ մեծ մարտին՝ Մինդորիի ճակատամարտին։ Ըստ պատմիչի, թագուհին այդ անգամ մարտի գնացող զորքերի հետ չի ուղարկել արքայական դրոշը՝ «Իվանե աթաբեկի կատարածի պատճառով»[29]։

Քննենք նաև այն հարցը, թե աթաբեկի համար իրո՞ք այդքան ազդու հանգամանք էր թագուհու առաջ պատասխան տալու հարկադրանքը։ Վերհիշենք թեկուզև XII դ. երկրորդ կեսի պատմությունը, երբ Դագի, Գարգառի ճակատամարտերի և 1174 թ. Անիի դեպքերի ժամանակ մեծատոհմիկ ավատատերերը և, առաջին հերթին, ամիրսպասալար Իվանե Օրբելին, բնավ իսկ չերկնչելով համեմատաբար ավելի մեծ փաստական իշխանություն ունեցող, վճռական ու հաստատակամ Գեորգի Գ-ից (1155/56—1184), չէին վախենում անգամ թշնամու հետ համագործակցելուց[30]։ Պետք է անպայման նկատի ունենալ նաև այն անժխտելի հանգամանքը, որ Թամար թագուհու (1184—1207/1210) գահակալության վերջին տարիներին սկսված թագավորական իշխանության թուլացումը Գեորգի-Լաշայի (1207/1210—1223) և Ռուսուդանի ժամանակ առավել մեծ չափով էր իրեն զգացնել տալիս, որը և չէր կարող դուրս չբացել մեծատոհմիկ ազնվականության ներսում նոր բախումների ու պայքարի համար։ Թամար թագուհու մահվանը հաջորդած ներքաղաքական խլրտումների մասին պատմում է նույնիսկ Իբն ալ-Ասիրը[31], իսկ հայկական աղբյուրները հիշատակում են միջավատատիրական պայքարի մի բնորոշ դրվագ՝ մոնղոլական առաջին արշավանքն ավանդելիս[32]։ Ուստի Իվանեի ու Շալվա և Իվանե Ախալցիխեցիների միջև «թշնամությունն» ամենևին էլ անհավանական չէ, մանավանդ երբ փորձում ենք բացահայտել այդ հակառակության հիմքերը։ Ակադ. Ն. Բերձենիշվիլու ուշագրավ կռահմամբ, երկպառակությունն արդյունք կարող էր լինել այն պայքարի, որ մղում էին երկու Իվանեներն աթաբեկության պաշտոնի շուրջ[33], սկսած XIII դ. սկզբից։ Հիշենք, որ Կարսի գրավումից հետո Թամար թագուհին հենց Իվանե Ախալցիխեցուն էր շնորհել Կարսի ամիրայից ամիրայի տիտղոսը և Լաշա-Գեորգիի խնամակալությունը՝ աթաբեկությունը[34]։ Թեև այդ կարևորագույն պաշտոնի շուրջ

---

[28] ივ. ჯავახიშვილი, *Նշվ. աշխ., էջ 48—49։*

[29] *«Վրաց ժամանակագրություն», էջ 70։*

[30] *Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 109—121։*

[31] Ибн ал-Асир, с. 131.

[32] *Մոնղոլների դեմ կռվի թեժ պահին Մանասազոմ բերդի տեր Համիդոլան կտրել էր Իվանե աթաբեկի ձիու ոտքի ջիլերը («Մաղաքիա աբեղայի Պատմութիւն վասն ազգին նետողաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 5, հմմտ. Վարդան, էջ 142)։*

[33] ნ. ბერძენიშვილი, საქართველოს ისტორიის საკითხები, ტ. IX, თბ., 1979, გვ. 184, 202:

[34] ქართლის ცხოვრება, ტ. II, თბ., 1959, გვ. 59. *Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 20։*